**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի (թվով 34 բնակավայրը ներառող 4 փաստաթուղթ) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 29.03.2022թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հ. Դավթյան |
| Անդամներ՝ | Լ. Պալյան |
| | Ա. Հակոբյան |
| | Ա. Յազչյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Նիկոլյան |

Բացակայում էին գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասլանյան, Լ. Գևորգյան

1. *Հայտի գնահատման մասին*

---

(Հ. Դավթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

<<Հայնախագիծ>> ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի <<ե>> պարբերության և հրավերի 4.3.3 կետի համաձայն՝ կանխիկ գումարի ձևով կատարված հայտի ապահովման վճարման հանձնարարագիրը:

1.2 Ներկայացված հայտի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց, որ մասնակցի կողմից չի լրացվել հավելված 1.1-ի 4.5 բաժինը:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 30.03.2022թ. ներառյալ) շտկել 1.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում շտկում ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել <<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/1>> ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ -0:*

## 2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

---

(Հ. Դավթյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 31.03.2022թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________________ Հ. Դավթյան

Անդամներ՝ ______________________ Լ. Պալյան

______________________ Ա. Հակոբյան

______________________ Ա. Յազչյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ______________________ Ն. Նիկոլայան